ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Հ. ՑԻՐՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցիրունյան.

Ի պատասխան Ձեր 01.11.2019թ. հ.01/405 գրության՝ տեղեկացվում է, որ 2019թ. ընթացքում Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոցում իրականացվել է ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգում, ասֆալտի քերուկ է տեղադրվել Հաղթանակ թաղամասի 4-րդ և 2-րդ նրբանցքներում, 4-րդ փողոցի 4-րդ նրբանցքում, 1-ին փողոցի 4-րդ նրբանցքում, Ամառանոցային 1-ին տարածքի երկու փողոցներում, իսկ 11-րդ փողոցից դեպի հ.113 դպրոց տանող ճանապարհին կառուցվել է մայթ: Ներկայումս Հաղթանակ թաղամասի 1-ին փողոցում իրականացվում են ասֆալտբետոնե ծածկի փոսային վերանորոգման աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետարանի 2019թ. ծրագրերով նախատեսված ասֆալտապատման աշխատանքներն ավարտման փուլում են, ուստի՝ Հաղթանակ թաղամասի մյուս փողոցների ասֆալտապատման աշխատանքները կքննարկվեն Երևանի քաղաքապետարանի 2020թ.-ի ծրագրերը կազմելիս:

Միաժամանակ տեղեկացվում է, որ 2017թ. հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման վարձակալության նոր պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պատասխանատվության ներքո:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ միջնորդագիր է ուղարկվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ խնդիրն ուսումնասիրելու և հնարավորության դեպքում կարգավորելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ